Հավելված 4
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի
2024 թվականի հունիսի 13-ի № 042-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՐԹԱԿԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, Հանձնաժողովի որոշումներով, Հանձնաժողովի և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի և գլխավոր քարտուղարի հրամաններով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Հանձնաժողովի նախագահը (այսուհետ՝ Նախագահ):

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում և փոփոխվում է՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կառուցվածքը և հաստիքացուցակը:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության խնդիրներն են՝

1) ուսումնական հաստատությունների հետ կապի ստեղծումը և ամրապնդումը՝ բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական ծրագրերի իրականացման նպատակով,

2) համապատասխան կրթական ծրագրերի կազմման և իրականացման ուղղությամբ առաջարկությունների մշակումը.

3) պետական պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների հետ վերապատրաստումների ծրագրում բարեվարքության թեմաներ ներառելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

4) կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների պարբերական գնահատման համակարգի ձևավորումը և պետական համակարգում այն ներդնելու համար առաջարկների ներկայացումը.

5) հասարակության տարբեր խմբերի համար հակակոռուպցիոն կրթության և իրազեկման իրականացման ապահովումը.

6) կոռուպցիայի կանխարգելման նպատակով տեղեկությունների փոխանակման էլեկտրոնային գործիքների ներդրման և շահագործման միջոցով հանրության հետ համագործակցության արդյունավետ մեխանիզմի ձևավորումը.

7) հանրության շրջանում կոռուպցիայի նկատմամբ, զրո հանդուրժողականության մշակույթի ձևավորումը.

8) կոռուպցիոն դրսևորումների և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների մասին հանրային իրազեկվածության բարձրացումը.

9) զանգվածային լրատվամիջոցների հետ կապի ստեղծումը և ամրապնդումը՝ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով.

10) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ կապի ստեղծումը և ամրապնդումը՝ հակակոռուպցիոն կրթական ծրագրեր և իրազեկման արշավներ իրականացնելու նպատակով.

11) հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների կատարման ապահովումը, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ համապատասխան առաջարկությունների մշակումը.

12) Հանձնաժողովի կողմից մշակված և իրականացված տարբեր կրթական ծրագրերի մոնիթորինգի իրականացում:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն իր խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է ուսումնական հաստատություններում կոռուպցիայի և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր.

2) համապատասխան կրթական ծրագրերի իրականացման նպատակով՝ մշակում է ուղեցույցներ, ուսումնաօժանդակ նյութեր, պարբերական խորհրդատվական զեկույցներ, իրականացնում վերապատրաստումներ մանկավարժների շրջանում.

3) Հանձնաժողովի մասնագիտական ստորաբաժանումների հետ համագործակցությամբ մշակում է պետական պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների տարեկան ծրագիրը, ժամանակացույցը և ներկայացնում է Հանձնաժողովի հաստատմանը.

4) Հանձնաժողովի մասնագիտական ստորաբաժանումների հետ համագործակցությամբ իրականացնում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների շրջանում հայտարարագրերի լրացման, հայտարարագրման համակարգի վերաբերյալ դասընթացներ.

5) Հանձնաժողովի մասնագիտական ստորաբաժանումների հետ համագործակցությամբ մշակում է շահերի բախման վերաբերյալ վերապատրաստման կրթական ծրագիրը, համակարգում է դրա իրականացումը.

6) մշակում է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հանրային իրազեկման և հաղորդակցության ռազմավարությունը, դրա իրականացման գործողությունների ծրագիրը և ներկայացնում է Հանձնաժողովի հաստատմանը.

7) ապահովում է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հանրային իրազեկման և հաղորդակցության ռազմավարության, դրա իրականացման գործողությունների ծրագրի կիրարկման համակարգումը.

8) հանրային իրազեկման և հաղորդակցության ռազմավարության և գործողությունների ծրագրի պատշաճ իրականացման նպատակով մշակում է օժանդակ նյութեր, իրազեկման հոլովակներ և այլն.

9) իրականացնում է կոռուպցիայի կանխարգելման և ազդարարման համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման արշավներ.

10) իրականացնում է մամուլի մշտադիտարկում և Հանձնաժողովին է ներկայացնում հանրային ծառայողի բարեվարքության, ներառյալ՝ վարքագծի, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ

սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, ինչպես նաև հայտարարագրերի վերաբերյալ հրապարակումները.

11) վարում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջը և սոցիալական էջերը.

12) Հանձնաժողովի կողմից մշակված և իրականացված տարբեր կրթական ծրագրերի մոնիթորինգի իրականացման նպատակով ներկայացնում է առաջարկություններ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Վարչությունը բաղկացած է վարչության պետից և վարչության մասնագետներից:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Հանձնաժողովի նախագահն իրականացնում է Վարչության ընդհանուր ղեկավարումն ու համակարգումը:

9. Հանձնաժողովի համապատասխան անդամը՝ իր համակարգման լիազորությունների սահմաններում, համակարգում է Վարչության գործունեությունը կամ իրականացվող առանձին աշխատանքները, տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն, ապահովում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականների իրականացումը:

10. Վարչությունը գործում է վարչության պետի անմիջական ղեկավարությամբ:

11. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը ստորագրում են Հանձնաժողովի նախագահը, Հանձնաժողովի գլխավոր քարտուղարը, ինչպես նաև Վարչության պետը, համապատասխան լիազորություն վերապահված լինելու դեպքում, անմիջական ղեկավարի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ:

12. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված ներքին փաստաթղթերը ստորագրում է Վարչության պետը: